ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով. **համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Այնթապ համայնքի ավագանու 11 արտահերթ նիստի օրակարգը:

1.Այնթապ համայնքի 2016 թվականի տարեվերջի գույքագրման արդյունքների ամփոփման և օգտագործման համար ոչ պիտանի գույքը դուրս գրման մասինի:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Այնթապ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին:

3.Այնթապ համայնքի ղեկավարին կից, Այնթապ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:

4.Այնթապ համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին:

5.Հանրային բաց լսումներ և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Այնթապ համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին:

6.Այնթապ համյանքի 2017 թվականի վարչական բյուջեի հաստատման մասին:

7.Այնթապ համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ

11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ, ԴՈՒՐՍ ԳՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետին համապատասխան. ***համայնքի ավագանին որոշում է՝***

- Ընդունել և հաստատել Այնթապ համայնքի 2016 թվականի տարեվերջի գույքագրման արդյունքների ամփոփման և օգտագործման համար ոչ պիտանի դուրս գրվող գույքի մասին ակտերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված1
Այնթապ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 35- Ն որոշման

2016Թ

ԱՌԿԱ ԳՈՒՅՔՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԵՆՅԱԿ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016Թ.

Հ/Հ	Գույքի անվանումը			Տ/Թ
1	Ղեկավարի սեղան	1	Կոմպ լեկտ	2012
2	Ղեկավարի սեղանի դիմադիր սեղան	1	հատ	2012
3	Սեղան հյուրերի	1	հատ	2012
4	Կախիչ փայտյա	1	հատ	2013
5	Օդորակիչ	1	հատ	2013
6	Ջահ	2	հատ	2011
7	Քիվ	2	հատ	2011
8	VIDEO DVR	1	հատ	2013
9	Ապակեպատ փոքրիկ սեղանիկ	1	հատ	2012
10	Պահարան	1	հատ	2012
11	Փափուկ աթոռ	1	հատ	2012
12	Պահարանիկ 3 դարակով	1	հատ	2012
13	Հեռախոս	2	հատ	2011
14	Չիրկիզվող պահարան	1	հատ	1993
15	Շերտավարագույր	2	հատ	2011
16	Խոլ /բազմոց՝ 2 բազկաթոռով/			2014
17	Մոնիտոր	1	հատ	2016

ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

1	Սեղան	1	հատ	2011
2	Հովացուցիչ	1	հատ	2012
3	Ներքին կապի հեռախոս	1	հատ	2013
4	Լուսամփոփ	1	հատ	2011
5	Կախիչ	1	հատ	2011
6	Է. Տաքացուցիչ	1	հատ	2015
7	Մոնիտոր	1	հատ	2016

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՍԵՆՅԱԿ

1	Գրասեղան	1	հատ	2011
2	Պահարան	1	հատ	2011
3	Փափուկ աթոռ պտտվող	1	հատ	2011
4	Աթոռ	2	հատ	1999
5	Համակարգչային սեղան	1	հատ	2007
6	Շերտավարագույր	1	հատ	2011
7	Քիվ	1	հատ	2011
8	Ջահ	1	հատ	2011
9	Կախիչ	1	հատ	2011
10	Հովացուցիչ	1	հատ	2011
11	Էլ. տաքացուցիչ	1	հատ	2015
12	Հեռախոս	1	հատ	2015
13	Համակարգիչ, մոնիտոր UPS	1	հատ	2016

ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՍԵՆՅԱԿ

1	Համակարգչային սեղան	1	հատ	2007
2	Համակարգիչ P-5, մոնիտոր	1	հատ	2012
3	Գրասեղան	1	հատ	2011
4	Պահարան	2	հատ	2011
5	Աթոռ	2	հատ	2009
6	Պահարանիկ – տակդիր տպիչի համար	1	հատ	2011
7	Կախիչ	1	հատ	2011
8	Ջահ	1	հատ	2011
9	Հեռախոս	1	հատ	2013
10	Շերտավարագույր	1	հատ	2011
11	Քիվ	1	հատ	2011
12	Սեղանի թղթադարակ	1	հատ	2013
13	Աշխատանքային փափուկ աթոռ	1	հատ	
14	Էլ. տաքացուցիչ	1	հատ	2015
15	Հովացուցիչ	1	հատ	2015

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՍԵՆՅԱԿ

1	Աշխատասեղան 4 հոգու համար	1	հատ	2011
2	Մոնիտոր	2	հատ	2016
3	UPS	1	հատ	2015
4	Փափուկ աթոռ	1	հատ	2007
5	Կիսափափուկ աթոռ	3	հատ	2007
6	Չհրկիզվող պահարան	2	հատ	1987
7	Տպիչ սարք	1	հատ	2008
8	Տպիչի տակդիր	1	հատ	2011
9	Կախիչ	1	հատ	2011
10	Ջահ	2	հառտ	2011
11	Քիվ	1	հատ	2011
12	Շերտավարագույր	1	հատ	2011
13	Էլ. Տաքացուցիչ	1	հատ	2014
14	Հովացուցիչ	1	հատ	2011
15	Ջրի սարք	1	հատ	2012
16	Համակարգիչ P-5, մոնիտոր	1	հատ	2015

ՀԱՇՎԱՊԱՀԻ ՍԵՆՅԱԿ

1	Պահարան	1	հատ	2011
2	Մոնիտոր	1	հատ	2015
3	Պրոցեսոր P-5M	1	հատ	2015
4	Պրոցեսոր	1	հատ	2012
5	Համակարգչի սեղան	2	հատ	2008
6	Սեղանի թղթադարակ	1	հատ	2013
7	Պատին ամրացված գրադարակ	4	հատ	2011
8	Սեղան	1	հատ	2011
9	Ջահ	1	հատ	2011
10	Էլ. Տաքացուցիչ	1	հատ	2014
11	Շերտավարագույր	1	հատ	2011
12	Քիվ	1	հատ	2011
13	Աթոռ	1	հատ	2003
14	Չհրկիզվող պահարան	1	հատ	1987
15	Կախիչ	1	հատ	2011
16	Տպիչ սարք	1	հատ	2007
17	Տպիչ սարք	1	հատ	2015

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՄԻՋԱՆՑՔ

1	Հայտարարությունների տախտակ	3	հատ	2011
2	Աթոռ	12	հատ	2011
3	Ջահ	2	հատ	2011
4	Շերտավարագույր	2	հատ	2011
5	Քիվ	2	հատ	2011

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆԻ ՄԵՆՅԱԿ

1	Չիրկիզվող պահարան	1	հատ	1991

ԳՐԱԴԱՐԱՆ

1	Գրադարակ	43	հատ	1987
2	ցուցափեղկ	2	հատ	2011
3	Կիսափափուկ աթոռ	2	հատ	2007
4	Գիրք	8.568	հատ	--------
5	Էլ. Տաքացուցիչ	1	հատ	2012
6	Կախիչ	1	հատ	2011
7	Երաժշտական կենտրոն	1	հատ	2001
8	Քիվ	1	հատ	2015
9	Շերտավարագույր	1	հատ	2015
10	Հովացուցիչ	1	հատ	2011

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՆՅԱԿ

1	Աշխատասեղան 5 հոգու համար	1	հատ	2014
2	Աշխատասեղան	1	հատ	2011
3	Պրոցեսոր P – 1V	2	հատ	2008
4	Մոնիտոր	4	հատ	2008
5	Տպիչ սարք	1	հատ	2008
6	Էլ. տաքացուցիչ	1	հատ	2011
7	Պահարանիկ /տպիչի տակդիր/	1	հատ	2011
8	Աթոռ	3	հատ	2007
9	Համակարգիչ, մոնիտոր	1	հատ	2008
10	Քիվ	2	հատ	2015
11	Շերտավարագույր	2	հատ	2015
12	Հովացուցիչ	1	հատ	2015
13	Համակարգիչ	2	հատ	2016

ԳՅՈՒՂԳԾՈՎ ՄԱՄՆԱԳԵՏԻ ՍԵՆՅԱԿ

1	Պատին ամրացված գրադարակ	3	հատ	2014
2	Աշխատասեղան	1	հատ	2014
3	Աթոռ	1	հատ	2007
4	Էլ. տաքացուցիչ	1	հատ	2014
5	Հովացուցիչ	1	հատ	2011
6	Համակարգիչ, մոնիտոր	1	հատ	2015
7	UPS	1	հատ	2015
8	Գազի կաթսա	1	հատ	2016
9	Քիվ	1	հատ	2015
10	Շերտավարագույր	1	հատ	2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածին համապատասխան. *համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Այնթապ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝համաձայն հավելվածի:

2.ՈՒժը կորցրած ճանաչել Այնթապ համայնքի ավագանու 01 սեպտեմբերի 2014 թվականի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Այնթապ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին >> թիվ 24-Ա որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՍԵՆ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված1
Այնթապ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 36- Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Այնթապ համայնքի ղեկավարին (այսուհետև՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:
2. Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թվարկված և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված կամավոր լիազորություններ: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները՝

Պաշտպանության կազմակերպման բնագավառում՝

1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝

1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.
3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.
4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.
5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

Հողօգտագործման բնագավառում՝

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.
2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնակարնային և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.
4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.
5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը,
2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում՝

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.
2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում՝

1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.
2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:
3) յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ,

Հողօգտագործման բնագավառում՝

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.
2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնակարնային և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.
4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.
5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը,
2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում՝

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.
2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում՝

1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.
2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:
3) յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ,

որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

4) այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների դեպքերում:
5) այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:
6) կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:
7) այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:
8) այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը, անհրաժեշտության հիմնավորումը և դրա պատճառը, անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:
9) համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1. կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.
2. կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

10) եթե կամավոր լիազորության իրականացման նախաձեռնողը սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն

չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

11) համայնքի ավագանին սույն կարգի 8-րդ կամ 10-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր լիազորության իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

12) համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր լիազորության իրականացման լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր լիազորության իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13) համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված այլ կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

15) զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները ավագանու կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից կամավոր լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

16) սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է **50.000 /հիսուն հազար/** դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը **2 անգամ**, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության

հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա):

17) սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան **2 անգամ**՝ տարեկան ուսման վարձի **50%-ի** չափով: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

18) Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չնախատեսված կարգով կամավոր լիազորությունների իրականացումն արգելվում է:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԺՊ՝ ԱՍՏՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետին, 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերին համապատասխան և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածին համապատասխան. **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել Այնթապ համայնքի ղեկավարին կից, Այնթապ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Այնթապ համայքի ավագանու 01 սեպտեմբեր 2014 թվականի <<Այնթապ համայնքի ղեկավարին կից, Այնթապ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հատատելու մասին>> թիվ 23-Ն որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Այնթապ համայնքի ավագանու

2016 թվականի դեկտեմբերի 16-ի

թիվ 37-Ն որոշում

ԿԱՐԳ

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1.Այնթապ համայնքում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումն, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով Այնթապ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավարին) կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմինների (այսուհետ՝ խորհուրդ):

2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կարգի հիման վրա:

3.Խորհրդի խնդիրներն են.

ա) համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ներգրավմամբ տվյալ ոլորտում հանրային կարևորության խնդիրների վերահանումը, դրանց վերաբերյալ կարծիքի (առաջարկ,եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին:

բ) համայնքի բնակիչների, քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների,միավորումների առաջարկությունների ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերլուծության հիման վրա կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին:

գ) տվյալ ոլորտի կառավարման նկատմամաբ հասարակական վերահսկողության իրականացումը:

4. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում է հետևյալ խորհուրդները.

ա) համայնքի զարգացման քառամյա ծրագիրի և տարեկան բյուջեի կառավարում,

բ) համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների,

գ)համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների:

5. Խորհուրդը ձևավորում է մինչև 7 անդամի կազմով, իսկ զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը՝ մինչև 5 անդամի կազմով:

6.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ խորհրդի անդամներին իր որոշմամբ նշանակում է համայնքի ավագանին՝ աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ(վերջինիս համաձայնությամբ), ընդ որում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի կազմում ներգրավում են նաև.

) առավելագույնը համայնքի ավագանու 3 անդամ՝ վերջիններիս համաձայնությամբ,

բ)մինչև 3 փորձագետ՝ տվյալ բնագավառի մասնագիտական գիտելիքների և բարձր որակավորում ունեցող, ցանկալի է հայտնի ու հեղինակություն վայելող այն անձանցից, որոնք չեն աշխատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ դրանց ենթակայության կազմակերպություններում և նախապես հայտնել են իրենց համաձայնությունը:

7. Հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց նշանակումը խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակային հայտարարության հիման վրա, ըստ հայտերի ներկայացման հաջորդականության՝ մինչև սյուն կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը, ընդ որում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարկան բյուջեի կառավարման խորհրդի կազմում համայնքի բնակիչները ներգրավվում են յուրաքանչյուր թաղամասից մեկ բնակիչ (հնարավորության դեպքում):

8. Խորհուրդը ձևավորված է համարվում, եթե նշանակվել են տվյալ խորհրդի առնվազն 5 անդամ, իսկ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը՝ եթե նշանակվել են առնվազն 3 անդամ:

9.Խորհրդի աշխատանքները իրականացվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են խորհրդի նախագահի կողմից:

10.Խորհուրդը նախագահում է համայնքի ղեկավարը, որը նշանակում է խորհրդի նախագահին ու քարտուղարին:

Խորհրդի նախագահի տեղակալ կարող է լինել համայնքի ղեկավարի տեղակալը կամ համայնքի ղեկավարի խորհրդականը կամ օգնականը կամ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, իսկ քարտուղար՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը կամ աշխատակիցը:

11.Խորհուրդն իր նիստը կազմակերպում է 6-րդ փողոց 47 հասցեում գտնվող համայնքապետարանի վարչական շենքում, եթե համայնքի ղեկավարի կողմից այլ որոշում չի ընդունվել:

12.Խորհրդի նախագահի որոշմամբ խորհրդի նիստերին, խորհրդակցական ձային իրավունքով կարող են մասնակցել նաև այլ անձինք (հրավիրվածներ), ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

13.Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է համայնքի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատակազմի աշխատակիցները:

14. Խորհրդի նախագահն իրականացնում է Խորհրդի գործունեության ընդհանուր ղեկավարումը:

15. Խորհրդի նախագահը՝

ա) հաստատում է խորհրդի նիստի օրակարգը,

բ) հրավիրում է խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է խորհրդի գործունեության և ղեկավարում դրա աշխատանքը,

դ) ստորագրում է խորհրդի նիստի արձանագրությունը:

16. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է խորհրդի նախագահի բացակայության ժամանակ:

17. Խորհրդի քարտուղարը՝

) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում խորհրդի նախագահի հաստատմանը,

բ) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը, ապահովում է մասնակիցների ներկայությունը,

գ) վարում է խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:

18. Խորհրդի անդամը նախագահողի կողմից կարող է հեռացվել խորհրդի տվյալ նիստից խորհրդի նիստի աշխատանքները խոչնդոտելու դեպքում, մասնավորապես եթե.

ա) 2 անգամից ավելի թույլ չի տալիս խորհրդի մյուս անդամներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ և (կամ) խոչընդոտում է խորհրդի անդամի ելույթը,

բ) առանց ձայնի իրավունք ստանալու 2 անգամից ավելի արտահայտում է իր կարծիքը,

գ) որևէ այլ կերպ խոչնդոտում է խորհրդի նիստի բնականոն ընթացքը:

19. Խորհրդի նիստը գումարվում է առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

20. Խորհրդի նիստին իրավազոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:

21.Խորհրդի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:

22.Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են խորհրդի նիստերին:

23. Խորհուրդն՝ ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է ընդունում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան խորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից ընդունվելու դեպքում:

24.Խորհրդի քարտուղարը մշակում և կազմում է նիստի օրակարգը՝ համաձայնեցնելով խորհրդի նախագահի հետ :

25.Խորհրդի նիստի օրակարգը խորհրդի քարտուղարը ներկայացնում է խորհրդի անդամներին՝ նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

26.Օրակարգում կարող են մտցվել լրացուցիչ հարցեր՝ համայնքի ղեկավարի կողմից:

27. Խորհրդի անդամն իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվեարկությամբ՝ տվյալ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28.Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է համայնքապետարանի վարչական շենքում կամ համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (հնարավորության դեպքում): Խորհրդի ընդունած եզրակացություններն ու առաջարկությունները հրապարակվում են ամբողջությամբ:

29. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից:

30. Խորհրդի անդամ չեն կարող լինել՝

ա) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,

) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

31.Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են տվյալ անձին համապատասխան խորհրդի կազմից հանելու մասին համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե խորհրդի անդամը՝

ա) դիմում է ներկայացրել խորհրդից դուրս գալու վերաբերյալ,

բ) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել խորհրդի նիստերի աշխատանքներին,

դ) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացմանը խորհրդում,

ե) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,

զ) նա մահացել է,

է) անձը դադարել է ավագանու անդամ լինելուց:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԺՊ՝ ԱՍՏՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 38-Ա
ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով. ***համայնքի ավագանին որոշում է***

1. Ստեղծել Այնթապ համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) նվերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Գեղամ Հովհաննիսյան համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահ
2. Աստղիկ Սարգսյան աշխատակազմի առաջատար մասնագետ, խորհրդի քարտուղար
3. Հայկ Մուրադյան ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
4. Ռուբեն Պողոսյան ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
5. Սուրեն Բաղրամյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Խորհրդի գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2016թ. նոյեմբերի 16-ի <<Այնթապ համայնքի ղեկավարին կից, Այնթապ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին >> N37-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել Այնթապ համայնքի ավագանու 01 սեպտեմբերի 2014 թվականի <<Այնթապ համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին>> թիվ 25-Ա որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 39-Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33.1-ին հոդվածի 3-րդ կետին, 54.1-ինհոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածին համապատասխան. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Այնթապ համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2.ՈՒժը կորցրած ճանաչել Այնթապ համայնքի ավագանու 01 սեպտեմբերի 2014 թվականի <<հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Այնթապ համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը>> թիվ 26-Ն որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՍԵՆ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1

Այնթապ համայնքի ավագանու

2016 թվականի դեկտեմբերի 16-ի

թիվ 39-Ն որոշում

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Տեղական ինքնակառավարմաննն առնչվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի (այսուհետ՝ նաև իրավական ակտ) հանրային բաց լսումները և (կամ) քննարկումներ (այսուհետ՝ նաև հանրային քննարկումներ) իրավական ակտերի նախագծերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձաց իրազեկման, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքման աշխատանքների իրականացման գործընթացն է:

2.Հանրային քննարկումների հիմնական խնդիրներն են՝ քննարկման դրված հարցերի վերաբերյալ հանրային կարծիքի բացահայտումը, այլընտրանքային տարբերակների, հնարավոր ծախսերի, օգուտների և հավանական ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների ստացումը և իրավաստեղծ աշխատանքներում հասարակության մասնակցության ապահովումը:

3.Հանրային քննարկումների իրականացման սկզբունքներն են հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը:

4.Հանրային քննարկումներին կարող են նմասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

5. Հանրային քննարկումների կազմակերպումը և իրականացումը ֆինանսավորվում է տվյալ տարվա Այնթապ համայնքի (այսուհետ՝ համայնք) բյուջեով նախատեսված հատկացումներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

6. Հանրային քննարկումների իրականացման ժամկետն առնվազն 15 օր է, եթե Այնթապ համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավարի) որոշմամբ չի սահմանվել առավել երկար ժամկետ:

2.ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

7.Համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար, ինչպես նաև հնարավորության դեպքում՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակվում է հանրային

քննարկումների հրավեր, որը պետք է պարունակի քննարկումների իրականացմնա տեսակի, վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև հանրային քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունմ,ան վերջնաժամկետի (եթե, նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) միասին տեղեկություններ: Ընդ որում, դիմումների ընդունման վերջնաժամկետը չի կարող պակաս լինել, քան հանրային քննարկումների հրավերի հրապարակման պահից տաս օրը:

Համայնքի ղեկավարի որոշմամբ, հաշվի առնելով հարցի կարևորությունը, հանրային քննարկումների հրավերը կարող է հրապարակել նաև զանգվածային լրատվամիջոցներով և ժամանակակից հեռահաղորդակցման այլի միջոցներով:

8.Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելու հետ մեկտեղ համայնքի ավագնու նստավայրում, ինչպես նաև հնարավորության դեպքում համայնքի պաշտոնական համացանցային հրապարակվում է իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված այլ նյութեր:

9.Հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք համայնքի ավագանու նստավայրում, ինչպես նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկությունները և դիտողությունները, որոնք կարող են թողնվել համացանցային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնայնին հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացվել համայնքի գյուղապետարան: Եթե առաջարկությունները և (կամ) դիտողություններն ուղարկվում են էլեկտրոնային հասցեով, ապա համայնքի գյուղապետարանն անմիջապես, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան դիտողությունները և (կամ) առաջարկությունները ստանալու մասին:

10. Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելուց առնվազն տասներկու օր հետո համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ հանրային քննարկումները կարող են իրականացվել նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով: Լսումների անցկացումը պարտադիր է համայնքի քառամյա ծրագրի, ինչպես նաև տարեկան բյուջեի նախագծերի քննարկման դեպքում :Տվյալ դեպքերում համայնքի գյուղապետարանի ներկայացուցիչը նախապես նշանակված ժամին բացում է քննարկումները, ներկայացնում է համապատասխան նախագծի համառոտ նկարագիրը, քննարկման հարցերի շրջանակը, համայնքապետարանի ներկայացուցիչ հանդիսացող հանրային քննարկումների քարտուղարին, ինչպես նաև մասնակիցներին տրամադրում է համապատասխան նյութերի քննարկումների վերաբերյալ, որոնք մինչև այդ հրապարակված չէին եղել նախագիծը մշակող մարմնի համացանցային կայքում: Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն քննարկումների ամսաթիվը , թեման, քննարկումների մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Մասնակիցները կարող են առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել նաև գրավոր: Գրավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կցվում են արձանագրությանը:

11.Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելուց հետո հասարակական հարցումների միջոցով հանրային քննարկումներ կարող են իրականացվել գրավոր կամ բանավոր: Տվյալ դեպքում համայնքապետարանի ներկայացուցիչը ներկայացնում է համապատասխան իրավական ակտի նախագծի համառոտ նկարագիրը և հարցման ենթակա հարցերի շրջանակը: Հարցման մասնակիցներն իրենց առաջարկությունները և դիտողությունները ներկայացնում են հարցումն իրականացնողին: Հարցումների վերաբերյալ կազմվում է գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է հարցում կատարողի կողմից: Արձանագրությունում պետք է ամրագրված լինի հարցումների ամսաթիվը, թեման, մասնակիցների առաջարկություններն ու դիտողությունները: Գրավոր ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կցվում են արձանագրությանը:

12.Հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների, հասարակական հարցումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով հանրային քննարկումների կազմակերպումը համայնքի ղեկավարը կարող է պատվիրել այլ անձանց:

3.ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄԸ

13.Հանրային քննարկումների արդյունքում քննարկամ դրված հարցերի առնչությամբ ստացված յուրաքանչյուր առաջարկության ու դիտողության վերլուծության, ինչպես նաև դրանց ամփոփման հիման վրա համայնքի ղեկավարը կարող է կատարել նախագծի անհրաժեշտ լրամշակում:

14. Հանրային քննարկումների ավարտից հետո 15 –օրյա ժամկետում նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կազմված ամփոփաթերթերը և նախագծի լրամշակված տարբերակը, բացառությամբ համայնքի բյուջեի մասին որոշման նախագծի հանրային քննարկումների արդյունքներով կազմված ամփոփաթերթի և այդ որոշման նախագծի լրամշակված տարբերակի, պետք է տեղադրվի համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև հնարավորության դեպքում համայնքի պաշտոնական համացանցային կայքում և նույն ժամկետում էլեկտրոնային տարբերակով պետք է տրամադրվի համայնքի ավագանու անդամներին:

Համայնքի տարեկան բյուջեի մասին նախագծի հանրային քննարկումների արդյունքներով կազմված ամփոփաթերթերը և այդ իրավական ակտի նախագծի լրամշակ տարբերակի՝ համայնքի ավագանու նստավայրում, ինչպես նաև հնարավորության դեպքում համայնքի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրելու և համայնքի ավագանու անդամներին էլեկտրոնայնին տարբերակով տրամադրելու ժամկետը, ելնելով համայնքի ավագանու բյուջետային քննարկումների ընթացքից, սահմանում է համայնքի ղեկավարը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԺՊ՝ ԱՍՏՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 40-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան. *համայնքի ավագանի որոշում է՝*

Հաստատել Այնթապ համայնքի 2017 թվականի վարչական բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1

Այնթապ գյուղական համայնքի ավագանու

2016 թվականի 16 դեկտեմբերի N 40-Ն որոշման

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱ ԲԱՇԽՈՒՄԸ

հազ. դր.

	Հարկատեսակը	Ընթաց. տարվա պլան	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
1	*Հողի հարկ նույն թվում*	*8515.0*	*2000.0*	*4007.5*	*6007.5*	*8515.0*
1.1	Հողի հարկ ֆիզիկական անձանցից	8500.0	2000.0	4000.0	6000.0	*8500.0*
1.2	Հողի հարկ իրավաբան. անձանցից	15.0	0.0	7.5	7.5	*15.0*
2	*Գույքահարկ նույն թվում*	*20050.0*	*4600.0*	*9750.0*	*14900.0*	*20050.0*
2.1	*Գույքահարկ շենք, շինութ, որից*	*3950.0*	*600.0*	*1750.0*	*2900.0*	*3950.0*
2.1.1	Գույքահարկ ֆիզիկակ. անձանցից	3400.0	500.0	1500.0	2500.0	*3400.0*
2,1,2	Գույքահարկ իրավաբ. անձանցից	550.0	100.0	250.0	400.0	*550.0*
2,2	*Գույքահարկ փոխադրամիջոցների*	*16100.0*	*4000.0*	*8000.0*	*12000.0*	*16100.0*
3	*Տեղական տուրքեր նույն թվում*	*4784.5*	*1198.0*	*2396.0*	*3806.5*	*4784.5*
3.1	Շինութ., շինարարութ. թույլ. համ. նույն					
3.1.1	*Հիմնական շինությունների համար*	*7.5*	*0.0*	*0.0*	*7.5*	*7.5*
3,1,2	*Ոչ հիմնական շինությունների համար*					
3,2	Շինությունների քանդման համար	5.0	0.0	0.0	5.0	*5.0*
3,3	Ծխախոտի վաճառքի թույլտվութ համ	752.0	188.0	376.0	564.0	*752.0*
3,4	Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվ համ	808.0	202.0	404.0	606.0	*808.0*
3,6	Վառելիքի վաճառքի թույլտվութ համ	1000.0	250.0	500.0	1000.0	*1000.0*
3,7	Ժամը 24^{00}-ից հետո աշխատելու համար	1000.0	300.0	500.0	700.0	*1000.0*
3.8	Տեխնիկական հեղուկների վաճառքի օբյեկտներ	100.0	50.0	100.0	100.0	*100.0*
3.9	Հանրային սննդի կազմակերպման և իրացման օբյեկտներ	32.0	8.0	16.0	24.0	*32.0*
4	Արտաքին գովազդի թույլտ. համար	1080.0	200.0	500.0	800.0	*1080.0*
4	*Տեղական վճարներ*	*6000.0*	*1500.0*	*3000.0*	*4500.0*	*6000.0*
4	*Շին փաստագրման համար*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*
4	*Աղբահանության վճարներ*	*6000.0*	*1500.0*	*3000.0*	*4500.0*	*6000.0*
5	*Հողերի վարձակալութ, այդ թվում*	*133.2*	*30.0*	*60.0*	*120.0*	*133.2*
5.1	Վարձ. հողի հարկ գյուղ նշ. հողերից	133.2	30.0	60.0	120.0	*133.2*
6	*Ընթացիկ տարվա դոտացիա*	*162527.2*	*40631.8*	*81263.6*	*121895.4*	*162527.2*
6.1	Ֆին. համահարթեցման դոտացիա	*162527.21*	*40631.8*	*81263.6*	*121895.4*	*162527.2*
	Ընդամենը վարչական բյուջ. եկամ.	*202009.91*	*49959.8*	*100477.1*	*151229.4*	*202009.9*

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՄՅԱ ԲԱՇԽՈՒՄԸ

հազ. դրամ

	ԾՐԱԳԻՐԸ	Ծրագիրը, հոդվածը	Ընթաց. տարվա պլան	I	II	III	IV
				եռամ	եռամ	եռամ	եռամ
				սյակ	սյակ	սյակ	սյակ
1	*Պետական կառավարում*	*1,1,1*	*39871.0*	*10880*	*20390*	*31630*	*39871*
1	Աշխատողների աշխատավարձ	4111	33421.0	8340.0	16680.0	26000.0	33421.0
2	Էներգետիկ ծառայություններ	4212	1500.0	500.0	700.0	1000.0	1500.0
3	պարգևատրում	4112	300.0	0.0	0.0	300.0	300.0
4	Կոմունալ ծառայություններ	4213	100.0	40.0	60.0	80.0	100.0
5	Կապի ծառայություններ	4214	750.0	250.0	450.0	650.0	750.0
6	Ապահովագրական ծախսեր	4215	100.0	0.0	100.0	100.0	100.0
7	Համակարգչային ծառայութ,	4232	250.0	100.0	100.0	200.0	250.0
8	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայութ.	4233	50.0	50.0	50.0	50.0	50.0
9	Մասնագիտական ծառայություններ	4241	100.0	50.0	100.0	150.0	100.0
10	Տեղեկատվական ծառայութ,	4234	200.0	100.0	200.0	200.0	200.0
11	Ընդհանուր բնույթի ծառայություններ	4239	500.0	200.0	300.0	500.0	500.0
12	Մեք. և սարքավ. ընթ. նորոգ և պահպ	4252	600.0	150.0	300.0	450.0	600.0
13	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	800.0	400.0	600.0	800.0	800.0
14	Տրանսպորտային նյութեր	4264	900.0	600.0	600.0	900.0	900.0
15	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	100.0	50.0	50.0	100.0	100.0
16	Սնունդ և տնտ, նյութեր	4267	200.0	50.0	100.0	150.0	200.0
2	*Ընդհանուր բնույթի այլ ծառ*	*1,3,3*	*150.0*	*150.0*	*150.0*	*150.0*	*150.0*
1	Համակարգչային ծառայութ,	4232	150.0	150.0	150.0	150.0	150.0
3	*Ընդհանուր բնույթի հանր, ծառ*	*1,6,1*	*6150.0*	*1675.0*	*3120.0*	*4480.0*	*6150.0*
1	Աշխատողների աշխատավարձ	4111	2460.0	615.0	1250.0	1900.0	2460.0
2	Պարտադիր վճարներ	4823	200.0	50.0	100.0	150.0	200.0
3	Ապահովագրական ծախսեր	4215	300.0	50.0	50.0	100.0	300.0
4	Տրանսպորտային նյութեր	4264	900.0	200.0	400.0	600.0	900.0
5	Տեղեկատվական ծառայութ,	4234	300.0	100.0	200.0	300.0	300.0
6	Մեք. և սարքավ. ընթ. նորոգ և պահպ	4252	150.0	50.0	100.0	150.0	150.0
7	Ընդհանուր բնույթի ծառայություններ	4239	300.0	100.0	200.0	300.0	300.0
8	Բանկային ծառայություններ	4211	40.0	10.0	20.0	30.0	40.0
9	Մասնագիտական ծառայություններ	4241	400.0	100.0	200.0	300.0	400.0
10	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	200.0	100.0	100.0	150.0	200.0
11	Նվիրատվ, այլ շահ, չհետ. կազմ,	4819	900.0	300.0	500.0	500.0	900.0
4	*Նավթամթերք և բնական գազ*	*4,3,2*	100.0	100.0	100.0	100.0	100.0
1	Մասնագիտական ծառայություններ	4241	100.0	100.0	100.0	100.0	100.0
5	*Ջրամատակարարում*	*6.3.1*	500.0	0.0	400.0	500.0	500.0
1	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	500.0	0.0	400.0	500.0	500.0
6	*Ոռոգում*	*4,2,4*	*5900.0*	*1800.0*	*3500.0*	*4700.0*	*5900.0*
1	Շենք շինութ. ընթացիկ նորոգ և պահ.	4251	900.0	300.0	500.0	700.0	900.0
2	Էներգետիկ ծառայություններ	4212	5000.0	1500.0	3000.0	4000.0	5000.0
7	*գյուղատնտեսություն*	*4.2.1*	*200.0*	*50.0*	*100.0*	*150.0*	*200.0*
1	Մասնագիտական ծառայություններ	4241	200.0	50.0	100.0	150.0	200.0
8	*Աղբահանում*	*5,1,1*	*16320.0*	*4080.0*	*8160.0*	*12240.0*	*16320.0*
1	Աղբի հեռացման ծառայություններ	*4213*	16320.0	4080.0	8160.0	12240.0	16320.0
9	*Շրջ միջավայրի պաշտպանութ*	*5,6,1*	*4454.0*	*941.0*	*2182.0*	*3323.0*	*4454.0*
1	*Կոմունալ ծառայություններ*	*4213*	*700.0*	*0.0*	*300.0*	*500.0*	700.0

	Աշխատողների աշխատավարձ	4111	3504.0	876.0	1752.0	2628.0	3504.0
	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	100.0	25.0	50.0	75.0	100.0
	Սնունդ և տնտ, նյութեր	4267	150.0	40.0	80.0	120.0	150.0
10	*Փողոցների լուսավորում*	*6,4,1*	*4276.0*	*919.0*	*1938.0*	*3157.0*	*4276.0*
1	Աշխատողների աշխատավարձ	4111	876.0	219.0	438.0	657.0	876.0
2	շենք. շին. ընթացիկ նոր. և պահպ.	4251	600.0	200.0	500.0	500.0	600.0
3	էներգետիկ ծառայություններ	4212	2800.0	500.0	1000.0	2000.0	2800.0
11	*Ընդհանուր բնույթի բժշկակ ծառ*	*7,3,1*	*2000.0*	*500.0*	*1000.0*	*1500.0*	*2000.0*
1	Այլ նպաստներ բյուջեից	4729	2000.0	500.0	1000.0	1500.0	2000.0
12	*Առողջ. այլ դաս. չպատկանող*	*7.6.2*	*200.0*	*0.0*	*0.0*	*300.0*	*200.0*
1	*Նվիրատ. այլ շահույթ չհետ. կազմ*	*4819*	*300.0*	*0.0*	*0.0*	*300.0*	300.0
13	*Մշակութային հիմնարկներ*	*8.2.3*	20928.9	5000	10000	15000	20928.9
1	*Այլ կապիտալ դրամաշնորհներ*	*4657*	20928.9	5000	10000	15000	20928.9
14	*Այլ մշակույթային կազմակերպ.*	*8.2.4*	*4000.0*	*950.0*	*2000.0*	*2750.0*	*4000.0*
1	*Ընդհանուր բնույթի այլ ծառայութ.*	*4239*	*1000.0*	*250.0*	*500.0*	*750.0*	1000.0
2	*Հատուկ նպատակային այլ նյութեր*	*4269*	*3000.0*	*700.0*	*1500.0*	*2000.0*	3000.0
15	*Նախադպրոցական կրթություն*	*9,1,1*	*45000.0*	*11250.0*	*22500.0*	*33750.0*	*45000.0*
1	Սուբսիդիաներ ոչ- ֆինան. Պետ.կազմակերպ.	4511	45000.0	11250.0	22500.0	33750.0	45000.0
16	Գրադարաններ	8.2.1	1060.0	260.0	520.0	780.0	1060.0
1	Աշխատողների աշխատավարձ	4111	960.0	240.0	480.0	720.0	960.0
2	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	100.0	20.0	40.0	60.0	100.0
17	*Միջնակարգ /լրիվ/ ընդ. կրթ.*	*9,2,2*	*1000.0*	*0.0*	*0.0*	*1000.0*	*1000.0*
2	Այլ նպաստներ բյուջեից	4729	1000.0	0.0	0.0	1000.0	1000.0
18	*Միջին մասնագիտ. կրթութ*	*9,3,2*	*400.0*	*100.0*	*200.0*	*300.0*	*400.0*
1	Այլ նպաստներ բյուջեից	4729	400.0	100.0	200.0	300.0	400.0
19	*Բարձրագույն մասնագիտ կրթ.*	*9,4,1*	*3000.0*	*1000.0*	*1500.0*	*2500.0*	*3000.0*
1	Այլ նպաստներ բյուջեից	4729	3000.0	1000.0	1500.0	2500.0	3000.0
20	*Սոցիալական պաշտպանութ*	*10,7,1*	*6500.0*	*1800.0*	*3000.0*	*4500.0*	*6500.0*
1	Հուղարկավ, նպաստներ բյուջ.	4726	2000.0	800.0	1000.0	1500.0	2000.0
2	Այլ նպաստներ բյուջեից	4729	4500.0	1000.0	2000.0	3000.0	4500.0
21	*Համայնքի պահուստային ֆոնդ*	*11,1,2*	*40000.0*	*10000.0*	*20000.0*	*30000.0*	*40000.0*
1	Պահ ֆոնդ հատ ֆոնդ բյուջե	4891	40000.0	*10000.0*	*20000.0*	*30000.0*	40000.0
	Ընդամենը		*202009.9*	*51455.0*	*100760.0*	*152810.0*	*202009.9*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ժ/Պ՝ ԱՍՏՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 41-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան. *համայնքի ավագանին որոշում է՝*

Տալ համաձայնություն Այնթապ համայնքի 2016 թվականի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ
3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
5. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ
6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ
8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ
9. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ
10. ՊԱԼԵՋՅԱՆ ԱՐՄԵՆ
11. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
Այնթապ գյուղական համայնքի ավագանու
2016 թվականի 15 դեկտեմբերի N41-Ն որոշման

Մշակութային հիմնարկներ ծրագրի /8.2.3/ այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածը /4657/ պակասեցնել 500.0 հդ-ով:

Սոցիալական պաշտպանություն ծրագրի /10.7.1/ հուղարկավորության նպաստներ բյուջեից հոդվածը /4726/ ավելացնել 500.0 հդ-ով:

Աշխատակազմի քարտուղար ժ/պ՝ Ա. Սարգսյան